ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1 –Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 25-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 1-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը***.

**1.1.** Ջերմուկի համայնքի ղեկավարի հաղորդումը 2014 թվականի առաջին կիսամյակում տեղական բյուջեի կատարման մասին.

զեկ. Ա. Ղազարյան - քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ

**1.2.** Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի N 19-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

զեկ. Ա. Ղազարյան - քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ

**1.3.** Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի N 20-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին.

զեկ. Գ. Թադևոսյան - քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

**1.4.** Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի N 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. Ա. Ղազարյան- քաղաքապետարանի աշխատակազմի ֆինբաժնի պետ

**1.5.** Ջերմուկի համայնքի 2014 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.

զեկ. Ա. Գառնիկյան- քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ

**1.6.** Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի 27-րդ շենքի N 9 սենյակը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին.

զեկ. Գ. Թադևոսյան- քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 26-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկի համայնքի ղեկավարի հաղորդումը 2014 թվականի առաջին կիսամյակում տեղական բյուջեի կատարման մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | բացակա | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | բացակա | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6..... դեմ-.....0........ ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2014 օգոստոսի 1

Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու
2014թ օգոստոսի 1 -ի թիվ 26-Ա որոշման

# ՀՀ Վայոց ձոր մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի 2014 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ 30.06.2014թ.

| N Խումբը | N Ենթախումբը | Եկամուտների անվանումը | Տարեկան բյուջե պլան | Հաշվետու ժամանակաշրջան (6 ամիս) պլան | Հաշվետու ժամանակաշրջան (6 ամիս) Փաստ | կատար. % 6 ամիսների նկատմամբ | կատար. % տարեկան պլանի նկատ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հազ.դրամ | | | | |
| I | | Վարչական բյուջե ընդամենը | 194219.2 | 90172.5 | 84272.5 | 93.5 | 43.4 |
| 1 | | *Ընդամենը հարկային եկամուտներ* | *41619.8* | *14838.0* | *14389.2* | 97.0 | 34.6 |
| | 1.1 | Հողի հարկ | 11278.1 | 2964.0 | 2059.1 | 69.5 | 18.3 |
| | 1.2 | Գույքահարկ | 30341.7 | 11874.0 | 12330.1 | 103.8 | 40.6 |
| | 1.6 | Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք | | | | | |
| 2 | | *Ընդամենը տեղական տուրքեր (թույլտվության համար)* | *7142.8* | *3377.0* | *2791.0* | 82.6 | 39.1 |
| | 2.1 | Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն | 6.0 | 0.0 | *120.0* | 0.0 | 2000.0 |
| | 2.2 | Օբյեկտները վերակառուցելու, տեսքը փոփ. աշխատանքներ | 266.0 | 132.0 | *215.0* | 162.9 | 80.8 |
| | 2.3 | Օբյեկտները քանդելու աշխատանքներ | 10.0 | 6.0 | *0.0* | 0.0 | 0.0 |
| | 2.4 | Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք | 2277.5 | 1026.0 | 718.9 | 70.1 | 31.6 |
| | ա | հիմնական շինությունների ներսում | 2277.5 | 1026.0 | 718.9 | 70.1 | 31.6 |
| | բ | ոչ հիմնական շինությունների ներսում | | | | | |
| | 2.5 | Բացօթյա վաճառք կազմակերպելու | 311.5 | 138.0 | 25.0 | 18.1 | 8.0 |
| | ա | Գազ և վառելիքաքսուքային նյութեր | 280.0 | 126.0 | 25.0 | 19.8 | 8.9 |
| | բ | գյուղմթերքներ, յուրաքանչյուր օրվա համար | 31.5 | 12.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | գ | այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք) | | | | | |
| | 2.6 | ժամը 24.00 ից հետո աշխատելու | 550.0 | 240.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | ա | խաղատներ | | | | | |
| | բ | շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ | | | | | |
| | գ | բաղնիքներ (սաունաներ) | | | | | |
| | դ | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ | 550.0 | 240.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | 2.7 | Արտաքին գովազդ տեղադրելու | 2346.8 | 1170.0 | 1287.1 | 110.0 | 54.8 |
| | ա | ծխախոտի արտադրանքի գովազդի | | | | | |
| | բ | այլ արտաքին գովազդ | 2346.8 | 1170.0 | 1287.1 | 110.0 | 54.8 |
| | 2.8 | Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր | 1375.0 | *665.0* | *425.0* | 63.9 | 30.9 |
| 3 | | *ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրք* | *500.0* | *240.0* | *186.0* | 77.5 | 37.2 |
| 4 | | *Ոչ հարկային եկամուտներ* | *74978.9* | *36678.0* | *31860.7* | 86.9 | 42.5 |
| | 4.1 | Համայնքի սեփ.համարվող հողերի վարձակալության վարձավճար. | 5122.0 | 1956.0 | 1601.2 | 81.9 | 31.3 |
| | 4.2 | Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավճարներ | 2518.0 | 1068.0 | 1890.4 | 177.0 | 75.1 |
| | 4.3 | Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ. | | | | | |
| | 4.4 | Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից | | | | | |
| | 4.5 | Տեղական վճարներ | 1500.0 | 744.0 | 1232.5 | 165.7 | 82.2 |
| | 4.6 | Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ | 12513.1 | 6252.0 | 3811.8 | 61.0 | 30.5 |
| | 4.7 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 53325.8 | 26658.0 | 23324.8 | 87.5 | 43.7 |
| 5 | | *Պաշտոնական տրանսֆերտներ՝ հատկացումներ* | *69864.2* | *34926.0* | *34932.1* | 100.0 | 50.0 |
| | 5.1 | Պետական բյուջեից դոտացիա | 55106.8 | 27552.0 | 27553.4 | 100.0 | 50.0 |
| | 5.2 | Այլ աղբյուրներից տրանսֆերտներ | 14757.4 | 7374.0 | 7378.7 | 100.1 | 50.0 |
| | | *Տարեսկզբի ազատ մնացորդ* | *113.5* | *113.5* | *113.5* | 100.0 | 100.0 |
| II | | Ֆոնդային բյուջե | 25000.0 | 12598.7 | 14934.7 | 118.5 | 59.7 |
| | 1.1 | այլ աղբյուրներից կապիտալ տրանսֆերտ | | | | | |
| | 1.2 | Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումից | 24797.3 | 12396.0 | 14732.0 | 118.8 | 59.4 |
| | 1.3 | Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումներ | | | | | |
| | | Տարեսկզբի ազատ մնացորդ | 202.7 | 202.7 | 202.7 | 100.0 | 100.0 |
| | | Ընդամենը եկամուտներ /I+II/ | *219219.2* | *102771.2* | *99207.2* | 96.5 | 45.3 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

1 օգոստոսի 2014թ. N 27-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին, 3-րդ կետին, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետին և 31-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի «Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 16-ի N 6-Ն որոշման հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» N 19-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ որոշման համարակալման <<Ն>> տառը փոխել <<Ա>> տառով:

բ/ որոշման NN 2,3,4 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3 հավելվածների:

գ/ համայնքային ծառայության մասով տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել հավելավճար 3 %-ի չափով

դ/ համայնքային ծառայության պաշտոնում աշխատակազմի համայնքային ծառայողների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար հետևյալ սկզբունքով՝

| Աշխատակազմում համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը | Մինչև 5 տարի | 5-7 տարի | 8-10 տարի | 10 տարուց ավելի |
|---|---|---|---|---|
| Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի չափը %-ով | 0 | 10 | 15 | 20 |

ե/ որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից, բացառությամբ Ջերմուկի քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետի ( պաշտոնի ծածկագիր՝ 3.1-13) հաստիքի կրճատումը, որը ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունը կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից»:

Հավելված 1
Ջերմուկի քաղաքային համայնքի
ավագանու 2014 թվականի օգոստոսի 1-ի
N 27-Ա որոշման

## ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար բարձր դասային. աստիճ.համար | հավելավճար երկար տարիների աշխատ.ստաժ | հավելում բարձր լեռնային | ընդհանուր աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 238100 | | | 8000 | 246100 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 193885 | | | 8000 | 201885 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **2** | **431985** | | | **16000** | **447985** |
| | ***ԱՇԽԱՏԱԿԱԶՄ*** | | | | | | |
| 4 | Աշխատակազմի քարտուղար (1.2-1) | 1 | 193885 | | | 8000 | 201885 |
| 5 | Գլխավոր մասնագետ-ճարտարապետ (2.3-3) | 1 | 122359 | 3% | 20% | 8000 | 158501.57 |
| 6 | Առաջատար մասնագետ (3.1-7) | 1 | 87305 | | | 8000 | 95305 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3** | **403549** | | | **24000** | **455691.57** |
| | ***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ*** | | | | | | |
| 7 | Ֆինանսական բաժնի պետ (2.1-4) | 1 | 170641 | | 20% | 8000 | 212769.2 |
| 8 | բաժնի առաջատար մասնագետ (3.1-9) | 1 | 87305 | 3% | 15% | 8000 | 111019.9 |
| 9 | բաժնի առաջատար մասնագետ (3.1-11) | 1 | 87305 | 3% | 10% | 8000 | 106654.65 |
| 10 | բաժնի առաջատար մասնագետ (3.1-10) | 1 | 87305 | | | 8000 | 95305 |
| 11 | բաժնի առաջատար մասնագետ (3.1-12) | 1 | 87305 | | | 8000 | 95305 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **5** | **519861** | | | **40000** | **621053.75** |
| | ***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ*** | | | | | | |
| 13 | Ներքին աուդիտի բաժնի պետ (2.1-3) | 1 | 170641 | | | 8000 | 178641 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1** | **170641** | | | **8000** | **178641** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ* | | | | | | | |
| 14 | Բաժնի պետ (1.3-1) | 1 | 256623 | | | 8000 | 264623 |
| 15 | ՍԾՏԲ գլխավոր մասնագետ (2.3-5) | 1 | 181885 | | | 8000 | 189885 |
| 16 | ՍԾՏԲ առաջատար մասնագետ (3.1-4) | 1 | 133603 | | | 8000 | 141603 |
| 17 | ՍԾՏԲ առաջատար մասնագետ (3.1-5) | 1 | 133603 | | | 8000 | 141603 |
| 18 | ՍԾՏԲ 2-րդ կարգի մասնագետ- հաշվապահ (3.3-2) | 1 | 87305 | 3% | 10% | 8000 | 106654.65 |
| 19 | ՍԾՏԲ 2-րդ կարգի մասնագետ (3.3-1) | 1 | 98548 | | | 8000 | 106548 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **6** | **891567** | | | **48000** | **950916.65** |
| *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ* | | | | | | | |
| 20 | ՔԿԱԳ բաժնի պետ (1.3-2) | 1 | 256623 | | | 8000 | 264623 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1** | **256623** | | | **8000** | **264623** |
| *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ* | | | | | | | |
| 21 | Ընդունարանի գործավար | 1 | 80000 | | | 8000 | 88000 |
| 22 | Տեղեկատվական համակարգի օպերատոր | 1 | 80000 | | | 8000 | 88000 |
| 23 | Հավաքարար | 1 | 70800 | | | 8000 | 78800 |
| 25 | վարորդ | 1 | 80000 | | | 8000 | 88000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **4** | **310800** | | | **32000** | **342800** |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ** | | **22** | **2985026** | | | **176000** | **3261710.97** |

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2
Ջերմուկի քաղաքային համայնքի
ավագանու 2014 թվականի օգոստոսի 1-ի
N 27-Ա որոշման

# ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## *Ջերմուկի համայնքի ճոպանուղի*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 107000 | 107000 | 8000 | 115000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 85600 | 42800 | 8000 | 50800 |
| 3 | Օպերատոր | 2 | 70800 | 141600 | 16000 | 157600 |
| 4 | Դիզելավար | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 5 | Հիդրավլիկայի մասնագետ | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 6 | Էլեկտրիկ | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 7 | Ռատրակավար | 0.5 | 66138 | 33069 | 8000 | 41069 |
| 8 | Տոմսավաճառ | 1 | 85600 | 85600 | 8000 | 93600 |
| 9 | Պահակներ | 3 | 70800 | 212400 | 24000 | 236400 |
| 10 | Հավաքարար | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 11 | Հսկիչ | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **13** | **839938** | **976469** | **112000** | **1088469** |

## *Մանկապատանեկան մարզադպրոց*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 84000 | 84000 | 8000 | 92000 |
| 2 | Բուժ. Քույր | 0.5 | 70800 | 35400 | 8000 | 43400 |
| 3 | Մարզիչ | 0.5 | 74150 | 37075 | 8000 | 45075 |
| 4 | Մարզիչ | 1.5 | 70800 | 106200 | 8000 | 114200 |
| 5 | Հավաքարար | 1 | 66138 | 66138 | 8000 | 74138 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **4.5** | **365888** | **328813** | **40000** | **368813** |

## *Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 92000 | 92000 | 8000 | 100000 |
| 2 | Մատենագետ | 1 | 85600 | 85600 | 8000 | 93600 |
| 4 | Գրադարանավար | 2 | 74150 | 148300 | 16000 | 164300 |
| 5 | Օպերատոր | 1 | 74150 | 74150 | 8000 | 82150 |
| 6 | Հավաքարար | 1.5 | 66138 | 99207 | 8000 | 107207 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **6.5** | **392038** | **499257** | **48000** | **547257** |

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 3
Ջերմուկի քաղաքային համայնքի
ավագանու 2014 թվականի օգոստոսի 1-ի
N 27-Ա որոշման

# ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## *Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց ՀՈԱԿ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 84000 | 84000 | 8000 | 92000 |
| 2 | Մարզիչ | 0.5 | 74150 | 37075 | 7415 | 44490 |
| 3 | Հավաքարար | 1 | 66138 | 66138 | 8000 | 74138 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **2.5** | **224288** | **187213** | **23415** | **210628** |

## *Ջերմուկի համայնքի „ ԶԱՏԻԿ„ մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 107000 | 107000 | 8000 | 115000 |
| 2 | Մեթոդիստ | 1 | 92600 | 92600 | 8000 | 100600 |
| 3 | Գլխավոր Հաշվապահ | 1 | 85600 | 85600 | 8000 | 93600 |
| 4 | Հաշվապահ-գանձապահ | 1 | 70800 | 69050 | 8000 | 77050 |
| 5 | Գործավար | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 6 | Տնտեսվար-պահեստապետ | 1 | 66138 | 66138 | 8000 | 74138 |
| 7 | Խոհարար | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 8 | Խոհարարի օգնական | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 9 | լվացարար | 1.75 | 70800 | 123900 | 8000 | 131900 |
| 10 | Օժանդակ բանվոր | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 11 | Դաստիարակ | 6.72 | 92600 | 622272 | 48000 | 670272 |
| 12 | Դաստիարակի օգնական | 6 | 70800 | 424800 | 48000 | 472800 |
| 13 | երաժշտության դաստիարակ | 1.5 | 92600 | 138900 | 8000 | 146900 |
| 14 | Հավաքարար | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 15 | Պահակ | 1 | 66138 | 66138 | 8000 | 74138 |
| 16 | Պահակ | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| 17 | Բուժքույր | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **28.97** | **1310676** | **2291998** | **216000** | **2507998** |

## *„Ջերմուկի երիտասարդական կենտրոն„ ՀՈԱԿ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 84000 | 84000 | 8000 | 92000 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | **1** | **84000** | **84000** | **8000** | **92000** |

### *Ջերմուկի համայնքի հ.1 արվեստի դպրոց ՀՈԱԿ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 92000 | 92000 | 8000 | 100000 |
| 2 | փոխտնօրեն | 0.5 | 85600 | 42800 | 8000 | 50800 |
| 3 | Հաշվապահ | 0.5 | 85600 | 42800 | 8000 | 50800 |
| 4 | Քարտուղարուհի | 1 | 66138 | 66138 | 8000 | 74138 |
| 5 | Տնտեսվար | 1.5 | 66138 | 99207 | 8000 | 107207 |
| 6 | Հավաքարար | 1.5 | 66138 | 99207 | 8000 | 107207 |
| 7 | Պահակ | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***7*** | ***532414*** | ***512952*** | ***56000*** | ***568952*** |

### *Ջերմուկի համայնքի հ.2 արվեստի դպրոց ՀՈԱԿ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | մեկ միավոր հաստիքի դրույքաչափ | պաշտոնային դրույքաչափ | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 92000 | 92000 | 8000 | 100000 |
| 2 | փոխտնօրեն | 0.5 | 85600 | 42800 | 8000 | 50800 |
| 3 | Հաշվապահ | 0.5 | 85600 | 42800 | 8000 | 50800 |
| 4 | Քարտուղարուհի | 1 | 66138 | 66138 | 8000 | 74138 |
| 5 | Տնտեսվար | 1.5 | 70800 | 106200 | 8000 | 114200 |
| 6 | Հավաքարար | 1.5 | 66138 | 99207 | 8000 | 107207 |
| 7 | Պահակ | 1 | 70800 | 70800 | 8000 | 78800 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***7*** | ***537076*** | ***519945*** | ***56000*** | ***575945*** |

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 28-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 20-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի հիման վրա ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Չեղյալ ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի «Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի հայեցողական և համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, վարձատրության կարգը սահմանելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 22-ի N 51-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին» N 20-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | բացակա | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | բացակա | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6....... դեմ-........0...... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 29-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետին և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 27-ի «Ջերմուկի համայնքի ղեկավարի 2014 թվականի ամսական վարձատրության չափը որոշելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2014 հունվարի 16-ի N 5-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 21-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ որոշման համարակալման <<Ն>> տառը փոխարինել <<Ա>> տառով,

բ/ որոշման առաջին կետում նշված « 244530» թիվը փոխարինել «238100» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2014 թվականի հուլիսի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 30-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ Ջերմուկի համայնքի 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությանը՝ հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (ձև 22 և ձև 22ա):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | բացակա | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | բացակա | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .......6....... դեմ-.......0...... ձեռնպահ- .0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 31-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 27-ՐԴ ՇԵՆՔԻ N 9 ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փ. 27-րդ շենքի N 9 սենյակը, (մակերեսը՝ 12 քմ), կենցաղային կարիքները հոգալու նպատակով համայնքի բնակիչ, այդ սենյակը օգտագործող և տիրապետող Լարիսա Մանուկյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արազգեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | բացակա | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | բացակա | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ......6...... դեմ-......0...... ձեռնպահ- ....0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ու Մ

1 օգոստոսի 2014թ. N 32-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 19-ՐԴ ՇԵՆՔԻ N 19 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ 6,87 ՔՄ ԵՎ 14,7 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի 19-րդ շենքի N 19 բնակարանին կից 6,87 քմ և 14,7 քմ մակերեսներով օժանդակ տարածքները խոնանոց և սանհանգույց ներկառուցելու նպատակով Շահումյան փողոցի 19-րդ շենքի N 19 բնակարանի սեփականատեր, նշված օժանդակ տարածքները օգտագործող և տիրապետող քաղ. Կարինե Ղարիբյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | [signature] | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | [signature] | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | [signature] | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | [signature] | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | [signature] | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | [signature] | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | [signature] | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2014թ. N 33-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին երթակտին և 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 30-ի «Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N 25-Ա որոշման 2-րդ կետը համարակալել որպես 3-րդ կետ:

2. Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 30-ի «Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» N 25-Ա որոշումը լրացնել հետևյալ՝ 2-րդ կետով. «2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010 թվականի փետրվարի 23-ի «Ջերմուկի քաղաքային համայնքի աշխատակազմի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 11-Ն որոշումը»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | բացակա | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | բացակա | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2014թ. N 34-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ պարբերության և 37-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ  է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում գիշերային ակումբների գործունեության համայնքային կանոններ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | բացակա | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | բացակա | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | բացակա | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....5....... դեմ-...1......... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Հաստատված է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի
քաղաքային համայնքի ավագանու
2014 թ-ի օգոստոսի 1-ի N 34-Ա որոշմամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Սույն կանոնները սահմանում են Ջերմուկի համայնքում գիշերային ակումբների գործունեություն ծավալող իրավաբանական ու ֆիզիկական անձանց (այսուհետ՝ կազմակերպիչ) որոշակի պարտականություններ ու պարտավորություններ, որոնց կատարումը պարտադիր է:

2. Արգելվում է Ջերմուկ քաղաքի առողջարանային մասում, որն ընդգրկում է ամբողջ աջափնյա տարածքը՝ գիշերային ակումբների գործունեությունը:

3.Ջերմուկ քաղաքի այլ տարածքներում սեփականաշնորհված, մասնավորեցված կամ այլ ձևով ձեռք բերված մեկուսի շենքերը և շինությունները օրենքով սահմանված կարգով պետք է օգտագործվեն ըստ գործառնական նշանակության: Եթե դրանք գիշերային ակումբների գործունեության կազմակերպման գործառնական նշանակություն չունեն, ցանկության դեպքում սեփականատերերը սահմանված կարգով պետք է դիմեն համայնքի ղեկավարին՝ գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն ստանալու և պետական գրանցման ներկայացնելու համար: Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա/ դիմողի՝ շենքի, շինության սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթղթի պատճեն, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և կանոնադրության պատճեն,

բ/ որպես գիշերային ակումբ օգտագործվող շենքի, շինության պետական գրանցման վկայականի պատճեն,

գ/ վարձակալությամբ օգտագործման տրամադրելու դեպքում՝ նաև վարձակալի անձը և իրավունքները հաստատող փաստաթղթերի պատճենները:

4. Սեփականաշնորհված, մասնավորեցված կամ այլ ձևով ձեռք բերված մեկուսի շենքերը և շինությունները կարող են օգտագործվել գիշերային ակումբների գործունեության կազմակերպման նպատակով, եթե դրանք մոտակա բնակելի տներից, բազմաբնակարան շենքերից, հյուրանոցներից, հյուրատներից, առողջարաններից, առողջատներից, առողջարանա-հյուրանոցային համալիրներից, կրթական ու մշակութային հաստատություններից մեկուսացված են առնվազն 500 մետր շրջագծով հեռավորությամբ, ապահովված են հակահրդեհային և սանիտարա-հիգիենիկ անվտանգության տեխնիկական անհրաժեշտ միջոցներով:

5. Կազմակերպիչը պարտավոր է օբյեկտի մուտքի մոտ տեսանելի տեղում փակցնել ցուցանակ, որտեղ նշվում են կազմակերպչի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:

6. Սույն կանոնների 3-րդ կետերում նշված վայրերում գործունեություն ծավալող գիշերային ակումբներում արգելվում է մինչև 18 տարեկան անձանց մուտքը:

7. Ժամը 24.00-ից հետո գիշերային ակումբներ աշխատեցնելու համար մուծվում է տեղական տուրք ավագանու 2013 թվականի նոյեմբերի 22-ի N 48-Ն որոշմամբ սահմանված չափով՝ 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ՝ընթացիկ տարվա համար:

8. Սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է համայնքի ղեկավարը:

9. Սույն կանոնները կազմակերպիչի կողմից չպահպանելը համայնքի ղեկավարի համար հիմք է վարչական վարույթի հարուցման:

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ